ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է, ԲԱՅՑ ԵՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ԹԱՆԿ ԵՆ ...

10.10.2013 12:32

Փաստաբանական համայնքն այսօր գործնականում իր բողոքն արտահայտեց ՀՀ արդարադատության նախարարության «Փաստաբանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ, այն համարելով, ինչպես պալատի նախագահ Արա Զոհրաբյանն ասաց՝ «բացասական օրինագիծ»:

Ինչպես գիտենք, նախագծով նախատեսվել է փաստաբանների պետական գրանցամատյանը վարելու նոր ընթացակարգ և այդ լիազորությունը վերապահվել է ՀՀ արդարադատության նախարարությանը: Եթե նախագծերը օրենք դառնան, ապա ՀՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագրված փաստաբանին փաստաբանների պետական գրանցամատյանում մեկ տարի ժամկետով հաշվառելու համար գանձվելու է տարեկան պետական տուրք՝ 60.000 ՀՀ դրամի չափով: Հատկանշական է այն, որ ներկայում փաստաբանների հաշվառումն իրականացվում է ՀՀ փաստաբանների պալատի կողմից, այն էլ՝ անվճար: Նախագիծը լուրջ անհանգստություն է առաջացրել փաստաբանների շրջանում, քանի որ նրանում ամրագրված դրույթները ոչ միայն չեն նպաստում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, այլև լուրջ սպառնալիք են հանդիսանում փաստաբանների անկախության և հեղինակության համար:

«Փաստաբանական կառույցը քաղաքացիական հասարակության ինստիտուտ է, արդարադատության նախարարության կողմից փաստաբանների գրանցամատյան վարելը վտանգում է կառույցի անկախությունը և որևէ հիմնավորում չունի»,-իր ելույթում դիտարկեց փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

«Նշեմ, որ արդարադատության նախարարությանը համարում ենք մեր գործընկերն այն իմաստով, որ արդարադատության նախարարությունը լուրջ քայլեր է կատարել փաստաբանության համար, և մենք մշտապես զգում ենք նախարարության ներկայությունը: Մենք գնահատում ենք դրականը,

գնահատում ենք ձեռքբերումը, բայց նաեւ քննադատում ենք և չենք ընդունում վատը, որը տեսնում ենք»,-հավելեց նա:
Ներկայացնելով կառավարության օրինագիծը, Արա Զոհրաբյանն ասաց, որ փորձ է արվում ՓՊ անդամներից գումարը գանձել և այն ուղղել Հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորմանը, դրան զուգահեռ կրճատելով Հանրային պաշտպանի գրասենյակի հաստիքացուցակը:

«Սահմանադրության 20-րդ հոդվածը նախատեսում է, որ պետությունն է ապահովվում անվճար իրավաբանական օգնության տրամադրումը քաղաքացիներին' օրենքով նախատեսված դեպքերում: Այսինքն' դա պետության պարտավորությունն է, որն այսօր ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Պետությունը' որպես պատվիրատու, որոշակի գումար է վճարում հանրային պաշտպանի գրասենյակին, հանրային պաշտպանի գրասենյակն էլ իր հանրային պաշտպաններով այդ ծառայությունը մատուցում է»,- ասաց Արա Զոհրաբյանը' նշելով, որ Հանրային պաշտպանի գրասենյակը փաստաբանների միջոցների հաշվին պահելն անընդունելի է:
«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է, որ պետական տուրք վճարում է պետական մարմնի ծառայություններից օգտվող անձը: Արդյո՞ք գրանցամատյան վարելով՝ փաստաբանն օգտվում է պետական մարմնի ծառայությունից: Ընդ որում, նախագծի մեջ շատ հետաքրքիր ձևով բացահայտվել է այդ «ծառայության» շահառուն, գրված է՝ պետական մարմիներն ու հասարակությունը: Այսինքն՝ ստացվում է, որ այդ գրանցամատյանը վարվում է, որպեսզի դրանից օգտվեն պետական մարմնիններն ու հասարակությունը փաստաբանի մասին տեղեկություն ստանալու համար: Ու այստեղ պետական տուրքի գաղափարախոսությունը խախտվում է. այդ դեպքում ինչո՞ւ պետք է վճարի փաստաբանը, փաստաբանը ո՞ր ծառայությունից է օգտվում,- նշեց պալատի նախագահը:

Նախագծի վերաբերյալ իրենց վրդովմունքն ու բացասական վերաբերմունքն արտահայտեցին նաև քննարկմանը մասնակցող փաստաբանները:

Պալատի նախկին նախագահ Ռուբեն Սահակյանը պետության այս նախաձեռնությունը որակեց երկու բառով՝ **«կողոպուտ և ավազակություն»: «Փաստաբանների ճնշող մեծամասնությունը,**

նրանք, ովքեր հարգում են իրենց մասնագիտությունը, չեն վճարի այդ գումարը: Իսկ չվճարելու դեպքում նրանք չեն ունենա արտոնագիր: Արդյունքում շատ լուրջ խնդիր է ունենալու պետությունը», նախագծից դժգոհելով ասաց ՓՊ խորհրդի անդամ Լուսինե Սահակյանը՝ հավելելով, որ փաստաբանների արտոնագրի վարումը վտանգում է իրենց անկախությունը և իրենց կախման մեջ դնում պետությունից»:
ՓՊ փաստաբան Ռուբեն Ռշտունին ավելի կոշտ մարտավարության կողմնակից է « **Ես կարծում եմ, որ պետք է գրել Թովմասյանին, որ եթե մեկ շաբաթվա ընթացքում այդ նախագիծը չհանվեց շրջանառությունից, ապա այս անգամ արդեն մեկ ամիս գործադուլ պետք է անել: Մենք մեր ուժը պետք է ցույց տանք»-ասաց նա:**

Մամլո սուլիսի ընթացքում ելույթ ունեցան նաև «Մարդու իրավունքների, քաղաքականության և հումանիտար պրոբլեմների միջազգային ասոցիացիա» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ՝ Հայկ Մարգարյանը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի խորհրդի անդամ Մարատ Ատովմյանը և փորձագետ Սոնա Հարությունյանը, ովքեր իրենց և ասոցիացիայի զորակցությունը հայտնեցին փաստաբանների պալատին՝ քննարկվող նախագծի ընդունման դեմ ծավալած պայքարում:

Ի դեպ, ասուլիսին հրավիրված Արդարադատության նախարարության ներկայացուցիչները այդպես էլ ներկա չգտնվեցին քննարկմանը:

Կարինե Ղումաշյան

ՀՀ փաստաբանների պալատ

Նախորդ նորությունը: ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ

Հաջորդ նորությունը: ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՎՃՌԱԿԱՆ Է. ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԾՈՎ ԻՐԵՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՈՐԵՎԷ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

Առաջարկվող նորություններ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ ՆԱԽԱԳԱՀ Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

16.10.2013ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

24.10.2013
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ 82 ՄԻԼԻՈՆ



24.10.2013ԸՆԴԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒՐՔԻ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })